

**Հաշվետվություն
արտասահման գործուղվելու վերաբերյալ**

Անունը, ազգանունը.

Սամվել Կարաբեկյան

Զբաղեցրած պաշտոնը.

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական

Գործուղման վայրը և ժամկետները.

Թաիլանդի Թագավորություն, ք. Բանգկոկ, 2019 թ. հուլիսի 4-ից 7-ը

Հրավիրող կողմը.

ՅՈՒՆԵՍԿՕ

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ակադեմիական գիտելիքների և տեխնոլոգիայի էթիկայի համաշխարհային հանձնաժողովի (COMEST) 11-րդ նիստին և Բիոէթիկայի միջազգային կոմիտեի (IBC) 26-րդ նիստի հանրային հանդիպումներին և դրանց շրջանակներում կազմակերպված Գիտության, տեխնոլոգիաների էթիկայի և տևակայուն զարգացման խնդիրներին առնչվող կոնֆերանսին:

Քննարկված թեմաները.

Պլենար նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Իրերի Ինտերնետի էթիկական հետևանքները,
- Արհեստական բանականության էթիկական կողմը (ներկայացվել է COMEST-ի աշխատանքային խմբի նախնական ուսումնասիրությունը),
- Վերարտադրողական տեխնոլոգիաների և ծնողության խնդիրների էթիկական հարցերը,
- Կլիմայի և, մասնավորապես, ջրային ռեսուրսների ուսումնասիրության էթիկական

կողմերը

Առանձին աշխատանքային խմբերում քննարկման են դրվել նաև գենոմային տեխնոլոգիաների էթիկական և հասարակական մարտահրավերները, արհեստական բանականության և ծավալուն տվյալների էթիկական ասպեկտները, կլիմայի փոփոխության ուսումնասիրության ոլորտի էթիկայի ներդրումը, ինչպես նաև գիտական հետազոտությունների ոլորտում ակադեմիական ազնվության մշակույթի խնդիրները զարգացող երկրներում

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Մասնացել են գիտական հետազոտությունների ոլորտում ակադեմիական ազնվության մշակույթի խնդիրները զարգացող երկրներում աշխատանքային խմբի քննարկումներին, նկատի ունենալով խնդրի այժմեականությունը Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության բարեփոխումների, մասնավորապես գիտական թեզերի և հրապարակումների համակարգի ընթացող վերափոխման համատեքստում: Աշխատաժողովի ընթացքում, նկատի ունենալով թերևս միջոցառման անցկացման վայրը, ներկայացվեց Չինաստանի, Հարավային Կորեայի, Թաիլանդի, Մալայզիայի և Շրի Լանկայի փորձը անվարելարժեք հետազոտությունների կանխարգելման ոլորտում:

Քննարկումների առանցքում բնագիտական և տեխնոլոգիական հետազոտությունների էթիկական կողմի ապահովումն էր: Մանրամասն քննարկվեց RCR (Հետազոտության պատասխանատու իրականացում) կոնցեպտը, վերջինիս զարգացումը անցած երկու տասնամյակներում, նշվեցին դրա ընկալման և տերմինաբանական ապահովման տարբերությունները, որոնց միասնականացման անհրաժեշտություն կա: Որպես խնդրի լուծման արմատական տարբերակ քննարկվեց բնագիտական և տեխնոլոգիական ուղղվածության կրթական ծրագրերում ներդնելով Հետազոտության պատասխանատու իրականացման դասընթացի ներդրումը: Այդ առնչությամբ ներկայացվեց և քննարկվեց Մալայզիայում միջազգային փորձագետների մասնակցությամբ մշակված և ներդրված RCR կրթական մոդուլը:

Ակնհայտ է, որ գիտության ու տեխնոլոգիաների զարգացումը պետք է ունենա համաչափ զարգացող հումանիտար բաղադրիչ, որպեսզի հնարավոր լինի նվազեցնել տեխնոլոգիական առաջընթացն ուղեկցող սոցիալ-հոգեբանական և մշակութային ռիսկերը: Այլ կերպ ասած՝ մենք կարիք ունենք տեխնոլոգիական գիտելիքի «հումանիզացիայի»:

Մյուս կողմից, անհրաժեշտություն է նաև կենսաբանական էթիկային առնչվող հասարակական զարգացման համար կարևոր տեղեկատվության ներմուծումը հումանիտար և հասարակագիտական հատվածում: Այդ առումով անչափ օգտակար է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի միջազգային կոմիտեի առաջարկած հումանիտար և հասարակագիտական սեկտորի համար մշակված Բիոէթիկայի օրինակելի ուսումնական դասընթացը և կից նյութերը, որոնք քննարկվել են կոնֆերանսի ընթացքում:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կոնֆերանսի արդյունքում քննարկվեց և ընդունվեց 10 կետից բաղկացած Բանգկոկի հայտարարությունը, որը կատարված բովանդակային և խմբագրական առաջարկություններից հետո պաշտոնապես կիրառարակվի:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Վերը նշված երկու ուղղություններով առաջարկում եմ ադապտացնել Հայաստանի կրթական միջավայրին համապատասխան դասընթացները: RCR դասընթացը նախընտրելի ԲՈԿ-ի հետ համատեղ համապատասխան քննարկումներից և վերամշակումից հետո փորձնական կերպով ներդնել ասպիրանտական կրթական ծրագրերում: Բիոէթիկայի դասընթացը առաջին փուլում նախընտրելի է փորձարկել բակալավրի կրթական ծրագրի հումանիտար և հասարակագիտական ոլորտի առանձին ընտրված ծրագրում: Դասընթացների մշակման և նախնական փորձարկման օպտիմալ ժամկետը՝ 2019/2020 ակադեմիական տարին է:

Ստորագրությունը, ամսաթիվը:

Սամվել Կարաբեկյան, 10.07.2019

